. . .(*) եւ եէնկիչէր աղասուն տվին զՊաղտատ, և մունդուր աղային տվին աստ աղայութիւն, և քէհապէկ արարին (պէրպ), և աղա արարին զքէհա նոր վէզիրին, որ ընդ նմա եկն ի Շամայ, և զանդէն լեալ օտայս եէնկիչարեաց աստ առաքեն, և զայսր եղեալսն կոչեն անդ. եւ ետ այգուցն այնմ եղելոյ չուխայս զօրականաց զի զբաղեսցին նովաւ: Եւ առեալ զորս և կամեցաւ քէհապէկն երթեալ յէտրէնէ. և յորժամ երթեալ մտանէ առ թագաւորն, նոյն ժամայն ասէ թէ ետու զՇամ քեզ ի փաշայութիւն, և զգեցուցեալ խիլայս առաքէ՝ մի՛ մնալ և յամել. և նա այլ չկարէ խօսիլ, զի անկանի ի կարգէ քէհապէկութեան. և հանեն զնա փոյթ ընդ փոյթ, և անտի անցանէ ի Պրուսայ: Եւ էր սա յոյժ բարի առ ազգս քրիստոնէից, և պատճառ ասացին սմա թէ Եղբայրն քո զտօնանման աւիրել ետ Ֆռանկաց և դու նոյնպէս խայլին ես. երկրորդ՝ տալիպ լինելոյ մօհրին, վասն որոյ և երկեան և հանին ի միջոյ: Նոյնպէս և ետ հանել զզափուճուլար քէհասի արքայի Շապան աղայ և ետ մանսուպ զՄանիսա և սպան ի ճանապարհին: Սպան և զուրացող մէտրապօլիտն Հռոմոց, որ էր զափուճիպաշի առ արքայ: Աքսորեաց եւ զմուհտին Եէսիրի եւ եդ ի տեղի նորա զՈւռումէլի զազիէսքէր Սուննիզատէ կոչեցեալն էմիր. և եդ Ուռումէլի զազիէսքէր զՄունդարիզատէ ոմն, որ ել աստի և գնաց Իէ Դեկտեմբերի ամսոյն:

(*) Սկիզբէն բուղթեր ինկած կը թուի: